



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության  
Հրապարակ, Կառավարական տուն 2.  
Հեռ. 52-19-64, Ֆաքս 52-63-65  
Էլ. փոստ: [minenergy@minenergy.am](mailto:minenergy@minenergy.am)  
Վեբ կայք: [www.minenergy.am](http://www.minenergy.am)

N 04/13/928-14  
18.03.14թ

„ԱՌՈՂՋ ՀՐԱՂԴԱՆ ԽՈՒՄԲ,,  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ  
ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, 2-րդ հարկ  
,, Օրիոս,, բնապահպանական կենտրոն

Ի պատասխան Ձեր 19.11.2013թ. գրության ՀՀ էներգետիկայի և բնական  
պաշարների նախարարությունը հայտնում է հետևյալը.

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի երկաթի հանքավայրի պաշարները հաստատվել  
են ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից՝ 1963թ դեկտեմբերի 21-ի  
թիվ 4184 արձանագրությամբ:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2007թ հունվարի 26-ի թիվ  
27-Ա հրամանով, <<Նագին>> ՍՊԸ-ին՝ 25 տարի ժամկետով՝ մինչև 26.01.2032թ  
տրամադրվել է Հրազդանի երկաթի հանքավայրի հանքարդյունահանման թիվ ՀԱ-Լ-  
14/453 հատուկ լիցենզիա, 50.0 մլն.տն հաստատված պաշարներով, 1-10 տարիների  
համար տարեկան 2.0 մլն տն տարեկան արտադրողականությամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող <<Կոնցեսիայի մասին >> ՀՀ  
նախկին օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ընկերությունը պարտավոր էր 9  
ամսվա ընթացքում հանքավայրի շահագործման նախագիծը ենթարկել ՀՀ  
օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների և կնքել լիցենզային  
պայմանագիր, իսկ նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված  
կարգով պահանջվող պաշարների վերահաստատման անհրաժեշտության դեպքում

պաշարների վերահաստատումից հետո 9 ամսվա ընթացքում կնքել լիցենզային պայմանագիր: Հայտնվում է, որ օրենսդիրը պաշարների վերահաստատման համար ժամկետ չի սահմանել: Ուստի ՀՀ բնապահպանության նախարարության կողմից՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրք/ 11-րդ հոդվածի 2-րդ, 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 5-րդ կետերի, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 2306-Ն որոշման 4-րդ և 7-րդ կետերի պահանջների համաձայն, հանքավայրի պաշարների լրահետախուզման և վերագնահատման համար 2007թ մայիսի 31-ին ընկերությանը տրամադրել է՝ ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով թիվ 66 ուսումնասիրության լիցենզիան և 2007թ մայիսի 31-ին կնքել ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության թիվ 244 լիցենզային պայմանագիրը:

Օգտակար հանածոների պաշարների գործակալության 2007թ դեկտեմբերի 12-ի թիվ 152 և 2008թ-ի մարտի 18-ի թիվ 152-Ա (ճշգրտած) որոշումներով վերագնահատվել է Հրազդանի երկաթի հանքավայրի պաշարները: Ընկերությունը 2008թ-ի սեպտեմբերի 4-ին ներկայացրել է հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծ:

Նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 13.10.2008թ. տրվել է դրական եզրակացություն :

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2009թ-ի փետրվարի 10-ի թիվ 15-Ա հրամանով, լիցենզիայում կատարվել է փոփոխություն, ընկերությանը տրամադրվել է հանքավայրի վերագնահատված ողջ պաշարները՝ 77736,4 հազ.տ հանքաքար:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և «Նագին» ՍՊԸ-ի միջև, 2009թ-ի մարտի 10-ին կնքվել է օգտակար հանածոների թիվ 427 լիցենզային պայմանագիրը, որով արդյունահանման է տրամադրվել՝ 70.0 մլն տ հանքաքար, 26.46 % երկաթի միջին պարունակությամբ:

Շահագործման 1-10 տարիներին սահմանվել է տարեկան 2,0մլն տ, 11-20 տարիներին՝ 3,0մլն տ և 21-25 տարիներին՝ 4.0 մլն տ արտադրողականություն:

Հանքաքարի պաշարների 7.5 մլն տ կորուստի պատճառ է հանդիսացել Աթարբեկյան ՀԵԿ-ի դերիվացիոն ջրանցքի պահպանության համար թողնված անվտանգության բնամասերը:

Պայմանագրի հավելված 2-ում սահմանվել է, որ մինչև 2009թ. վերջը ընկերությունը պետք է լիազոր մարմին ներկայացներ հանքաքարի հարստացման նախագիծը՝ փորձաքննության նպատակով:

Ի մի բերելով վերը շարադրվածը և անդրադառնալով Ձեր 19.11.2013թ. գրությանը հայտնում ենք, որ <<<<Նագին>> ՍՊԸ-ին տրված հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի կիրառությունը <<Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու /Կոնցեսիայի/ մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջով>> անընդունել է, քանի որ նշված հոդվածով սահմանվում էր, որ լիազոր մարմինը դադարեցնում է հանքային իրավունքը, եթե լիցենզառուն ոչ պակաս քան 3 տարվա ընթացքում չէր կարողացել իրականացնել հանքարդյունահանման աշխատանքներն իր հանքարդյունահանման նախագծին համապատասխան և այդ ընթացքում արդյունահանել էր արդյունահանման չափաքանակի 50 տոկոսից պակաս: <<Նագին>> ՍՊԸ-ի համար նշված ժամկետն ավարտվում էր 10.03.2012թ.: Ուստի ընկերության հանքային իրավունքը <<Կոնցեսիայի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի հիման վրա 2010թ. չէր կարող դադարեցվել, իսկ 2012թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքը նման պահանջ չի սահմանել ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման համար: Ինչ վերաբերվում է լեռնահատկացման ակտի վերաբերյալ Ձեր դիրքորոշմանը, հայտնում ենք, որ ՀՀ <<Ընդերքի մասին>> նոր օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն է լեռնահատկացման ակտը տրվում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման հետ միաժամանակ, որը հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի բաղկացուցիչ մաս: Ուժի մեջ մտած նոր օրենսգրքի դրույթները հետադարձ ուժ չունեն, իսկ <<Կոնցեսիայի մասին>> ՀՀ նախկին օրենքի 3-րդ հոդվածով սահմանված էր, որ հանքային իրավունքը՝ համապատասխան լիցենզիայով, նախագծով և լիցենզային պայմանագրով հավաստվող իրավունքն է: Լեռնահատկացման ակտի տրամադրման համար նախկին օրենսդրությամբ ժամկետ չէր սահմանվում, այն տրվում էր ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1445-Ն որոշման համաձայն՝ լիցենզային

պայմանագրի հիման վրա, լիցենզառուի կողմից լիազոր մարմին համապատասխան փաստաթղթերի կցմամբ հայտի ներկայացումով:

Միաժամանակ հայտնում ենք նաև, որ նոր Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 80-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունքը /լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ/ ընդերքօգտագործողի դիմումի հիման վրա ենթակա էր վերաձևակերպման: 80-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպման դեպքում օրենսգրքով սահմանված թույլտվությունների տրման և գործողության ժամկետներ են համարվել մինչև նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման ոլորտում տրված լիցենզիաների տրման և գործողության ժամկետները:


Հանքարդյունահանման թիվ ՀԱ-Լ-14/453 հատուկ լիցենզիան 2012թ-ի հոկտեմբերի 20-ին վերաձևակերպվել է օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ- 29/169 թույլտվությամբ, լիցենզային թիվ 429 պայմանագիրը՝ ընդերքօգտագործման ՊՎ -169 պայմանագրով, իսկ լեռնահատկացման թիվ 372 ակտը՝ ԼՎ-169 լեռնահատկացման ակտով:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 05.06.2012թ. թիվ 36-Ա հրամանով հաստատվել է ընդերքօգտագործման իրավունքների վերաձևակերպման կարգը, որով սահմանվել է, որ ընդերքօգտագործման իրավունքում փոփոխությունները և լրացումները կատարվում են 2012թ. նոյեմբերի 28-ին ընդունված ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան իրավունքի վերաձևակերպման գործընթացն ավարտելուց հետո, ինչի արդյունքում էլ նախարարության և «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ի միջև 20.10.2012թ. կնքված ընդերքօգտագործման թիվ ՊՎ-169 պայմանագիրը ներառել է նախկին պայմանագրի հատուկ պայմաններով սահմանված դրույթները:

Ինչ վերաբերվում է շահագործման նախագծի շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությանը, ապա դրա իրականացումը դուրս է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասության շրջանակներից և նախարարությունը պարտավոր է ընդունել պետական լիազոր մարմնի կողմից ներկայացված դրական եզրակացությունը և ապահովի ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման

հետագա ընթացքը, ելնելով այն կանխավարկածից, որ եզրակացությունը տրվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում: Ուստի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, չի կարող կասկածի տակ դնել լիազոր մարմնի կողմից տրված եզրակացության իրավաչափությունը, քանի դեռ այն անվավեր չի ճանաչվել կամ չի հաստատվել դրա առոչինչ լինելը: Ինչ վերաբերվում է 14.12.11թ. ՀՀ բնապահպանության նախարարի մոտ կայացած խորհրդակցությունում <<Ֆորչն Ռիզորսիս>> /նախկինում՝ <<Նագին>>/ ՍՊԸ-ի տնօրենի այն հայտարարությանը, որ ընկերության կողմից պատվիրվել է հանքի շահագործման նոր նախագիծ, ապա այն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն չի ներկայացվել:

Հայտնում ենք, որ <<Նագին>> ՍՊ ընկերությունը <<Ֆորչն Ռիզորսիս>> ՍՊ ընկերությամբ անվանափոխելու համար հիմք է հանդիսացել ընկերության 2011թ-ի փետրվարի 25-ի ընդհանուր արտահերթ ժողովի որոշմամբ հաստատված և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նոր Նորքի տարածքային բաժնի կողմից 2011թ-ի մարտի 2-ին գրանցված <<Ֆորչն Ռիզորսիս>> ՍՊ ընկերության կանոնադրության փոփոխությունը:



ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ